

Ռ. ԱԹԱՅԱՆ, Հայկական խաղալին նոտագրությունը, Հայկական  
ՍՍՌԻ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1959, 285 էջ, գինը 14 ռ. 60 կ.:

Խաղերի (միջնադարյան հայ երաժշտության նոտագրության) ուսումնասիրությունը գիտական մեծ կարևորության պրոբլեմ է, քանի որ այն հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու անցյալի հայկական երաժշտական մշակույթի մասին, դրանով իսկ նպաստելով սովետահայ երաժշտագիտության կենտրոնական հարցերից մեկի լուծմանը, այն է՝ հայ երաժշտության ամբողջական պատմության ստեղծմանը:

Գրականությունից, զանազան վկայություններից հայտնի է, որ միջնադարյան հայ երաժշտությունն ունեցել է զարգացման բարձր առաջնություն, գեղարվեստական մեծ արժեք, իսկ հասարակական կյանքում՝ խոշոր դեր ու նշանակություն, սակայն այդ արվեստն այսօր անմատչելի է, ինչպես ասում են «խաղերի բանալին» կորած լինելու պատճառով:

Խաղերի վերածնության գործով զբաղվել են բազմաթիվ հայ և օտարազգի գիտնականներ, սկսած XVIII դարից մինչև մեր օրերը ներառյալ: Այդ բարդ պրոբլեմին է նվիրված նաև սովետահայ երաժշտագետ Ռոբերտ Աթայանի գրախոսվող աշխատությունը:

Ռ. Աթայանը աշխատել է իր ուսումնասիրության մեջ հալ հին նոտագրության հարցը ուսաբանել հնարավորին չափ բազմակողմանիորեն: Նրա ստացած արդյունքները բավական համոզիչ են և նշանակալից, մի բան, որ չի կարելի ասել նախկինում կատարված փորձերի մասին, բացառությամբ Կոմիտասի, որի աշխատությունը, ինչպես հայտնի է, անհետ կորած է:

Աթայանի աշխատությանը ծանոթանալիս պարզ է դառնում, որ հեղինակը նախապես ուսումնասիրել է խաղերի ուսմունքին նվիրված բոլոր հետազոտությունները, հաշվի առել նրանց ձևաբանություններն ու անհաջողությունները, համեմատել նրանցում ի հայտ բերված վերլուծական և մեթոդական սկզբունքները և այդ հիմքի վրա ստեղծել հետազոտական իր ուրույն սկզբունքը, որը և ապահովել է նրա աշխատության գիտական հիմնավորվածությունը, մեթոդի ճշտությունը, հարցերի լայն ընդգրկումը:

Խաղարանության վերաբերյալ եղած գրականության քննական տեսությունը տրված է Աթայանի աշխատության 4-րդ գլխում: Այստեղ օտարազգի գիտնականների աշխատությունները ենթարկված են ընդհանուր քննարկման, քանի որ նրանց խաղագիտական հետազոտությունները դրական արդյունքներ չեն տվել (այդ գիտնա-

կանները բավարար չափով ծանոթ չէին հայ լեզվին ու երաժշտությանը):

Հեղինակը քննարկում է հայ տեսաբանների աշխատությունները և հատկապես Կոմիտասի հողվածներն ու բազմաթիվ ձեռագիր նյութերը, աշխատելով վերջինիս գործերի գնահատականը դուրս բերել նրա ընդհանուր գործունեությունից: Աշխատության 142-րդ էջում հեղինակը գրում է. «...ձեռնարկելով խաղերի վերածնությանը, Կոմիտասը նույն նպատակն էր հետապնդում՝ երևան բերել ժողովրդի ստեղծագործական հարստությունները, հնարավորին չափ լրիվ վերականգնել բազմադարյան ժողովրդական-երաժշտական կուլտուրան, որոշել նրա զարգացման ուղիները, և, վերջապես, պատմական-տրագիկականների ստեղծագործական զարգացման և անցյալի երաժշտության լավագույն նմուշների մշակման միջոցով ստեղծել գեղարվեստական նոր երկեր»:

Միանգամայն արդարացիորեն Աթայանն իր աշխատության մեջ իբրև հիմք և ելակետ ընդունել է խաղարանության հարցերի նկատմամբ ցուցարկերած կոմիտասյան այս մոտեցումը:

Կոմիտասից են ժառանգած նաև Աթայանի աշխատության մեջ հանդես բերված պատմականությունը (նոտագրության սիստեմի ուսումնասիրությունը կատարված է նրա ծագման, զարգացման ու անկման պրոցեսում), հետազոտական մեթոդը (տեսական հարցերի բխցումը փաստական նյութերից՝ ձեռագրերից, նրանց համեմատական վերլուծության միջոցով), գիտական բարեխղճությունը:

Աշխատության հեղինակը ընդունում է նաև խաղերի կոմիտասյան դասակարգումը (ձայնաստիճանի, ձայներանգի խաղեր և այլն), Կոմիտասի որոշ դրույթներն ու հետևությունները, ինչպիսիք են՝ խոսակցական և երաժշտական ինտոնացիաների կապի ու փոխհարաբերության գոյությունը, խաղերի ուսումնասիրության գործում ժողովրդական երաժշտության օրինաչափությունների վերլուծության ունեցած մեծ նշանակությունը և այլն:

Խաղերի ուսումնասիրության պրոբլեմը, որպես ինքնուրույն գիտական պրոբլեմ, իր «խորությամբ և լայնությամբ» սովետահայ երաժշտագիտության մեջ դրվում է առաջին անգամ Աթայանի այս աշխատության մեջ, որը և նրա հետազոտությանը հաղորդում է գիտական խոշոր արժեք:

Աշխատության 1-ին և 2-րդ գլուխները նվիրված են խաղերի նոտագրությունը կազմող

առողջանության և երաժշտական սիստեմների ծագման, զարգացման, դրանց փոխհարաբերության ու էության, ինքնուրույնության ու ինքնատիպության հարցերին: Նշված գլուխներն առանձին արժեք են ներկայացնում, որովհետև գիտականորեն հերքում են հայ երաժշտագիտության մեջ երկար ժամանակ իշխող անհիմն ու սխալ տեսակետը խազերի ոչ հայկական ծագում ունենալու մասին:

Հայկական նոտագրության հին շրջանների պատմությունը լուսարանելու համար հեղինակը նախ փորձել է գտնել մինչև այժմ անհայտ մնացած, ավելի վաղ շրջանի ձեռագրեր: Դա հեղինակին հաջողվել է: Ավելին, հնագրության օգնությամբ նա կարողանում է որոշել դրանցում եղած երաժշտական խազերի ծագման ժամանակը:

Մինչև այժմ որպես խազերի ծագման ժամանակաշրջան ընդունված էր XII դարը, մինչդեռ ըստ Աթայանի այդ ժամանակաշրջանը IX, մինչև անգամ VIII դարն է: Նման հայտարարության համար նա հիմք է ընդունում թե՛ իր հայտնաբերած ձեռագրերը, որոնց ժամանակաշրջանը հնագրության միջոցով սահմանում է IX դարը, և թե՛ հավանական գիտական կռահման մեթոդը, որի համաձայն նա իրավացիորեն ենթադրում է, որ խազերը մինչև XII դարի զարգացման բարձր աստիճանին հասնելը պետք է անցած լինեին իրենց ծագման ու զարգացման նախորդող շրջանները, իսկ բանավոր ստեղծագործության մեջ տեղ գտնեին գոնե մեկ դար առաջ, այսինքն՝ VIII դարից:

Հայկական խազային նոտագրությունը որպես այդպիսին ծագել և զարգացել է Հայաստանում և ինքնատիպ է — սա է Աթայանի աշխատության առաջին երկու գլուխների վերջնական մտահանգումը, որն իր գիտական հիմնավորվածությամբ միանգամայն ընդունելի է:

Հայկական խազային սիստեմի ինքնատիպությունը հեղինակն ապացուցում է (բացի ծագման ժամանակաշրջանից) նաև այլ սիստեմների համեմատությամբ, հայկական խազերի ունեցած դերի ու արտաքին գծագրության յուրօրինակությամբ, սիստեմի կրած փոփոխություններով (ավելանում է հիմնական նշանների քանակը, կատարելագործվում են ձևերը և այլն):

Երաժշտական խազերն ուսումնասիրելիս, նախորդ տեսարանների օրինակով, Ռ. Աթայանը նույնպես դիմում է հայ լեզվի առողջանության խազերի օգնությանը, որովհետև նա ևս ընդունում է այդ սիստեմների միջև գոյություն ունեցող սերտ կապը որպես խոսակցական և երաժշտական ինտոնացիաների միջև եղած սերտ կապի հետևանք: Սակայն եթե նախորդ տեսարաններից ոմանք (Օ. Ֆլայշեր, Սպ. Մելիքյան)

գտնում էին, որ հայ և հունական առողջանության սիստեմները ըստ էության նույնն են՝ V դարում հույներից փոխառնված լինելու պատճառով, ապա Ռ. Աթայանն իր ամբողջ աշխատության ընթացքում, և հատկապես նրա 1-ին գլխում, ուսումնասիրում է առողջանության խազերի հայկական սիստեմը դարձյալ նրա ինքնուրույնության և ինքնատիպության տեսանկյունով:

Մեր հին ձեռագրերում արձանագրված առողջանության նշանները տասն են, որոնք ըստ նշանակության խմբավորվում են հետևյալ կերպ. ոլորակ (շեշտ, բութ, պարույկ), ամանակ (սուղ և երկար), հագագ (թավ, սոսկ) և կիրք (ապաթարց, ենթամնա և ստորատ): Հեղինակն իր գիտողությունների և կոմիտասի ուսումնասիրությունների հիման վրա տալիս է դրանցից յուրաքանչյուրի և ամբողջ սիստեմի բնութագիրը, այսինքն որպես ուսումնասիրման մեթոդ ընդունում է երևույթների մասնակի և ամբողջական հետազոտական սկզբունքների զուգակցումը, որի լիարժեք լինելը գործնականում ապացուցված է:

Աշխատության 3-րդ գլուխը նվիրված է խազային նոտագրության ծագման ու զարգացման կտապների ուսումնասիրությանը, կապված հայկական միջնադարյան երաժշտության զարգացման հետ:

Ըստ երաժշտական մի քանի խազերի նշանակությունները պարզելու, վերծանելու փորձ է արվում աշխատության վերջին գլխում:

Իր ուսումնասիրության համար հեղինակն ընտրում է երկու եղանակ՝ կոնկրետ ձեռագրերի խազերի օրինաչափությունների ուսումնասիրությունը և բանավոր ստեղծագործության մեջ մինչև մեր օրերը պահպանված միջնադարյան երաժշտության օրինակների ու հին ձայնագրությունների համեմատությունը: Նշենք, որ հեղինակն առաջարկում է ուսումնասիրման այլ ճանապարհներ ևս՝ խազերի սիստեմին վերաբերող նոր հիշատակությունների հայտնաբերման, այլ ժողովուրդների միջնադարյան նեմային նոտագրության համեմատական ուսումնասիրման ճանապարհները և այլն:

Որպես ուսումնասիրության նյութ, Ռ. Աթայանն ընտրում է մինչև XII դարն ընդունված խազային սիստեմը, որովհետև ըստ հեղինակի այն պարզ է, իսկ նրանով ձայնագրված երաժշտությունը, մասնավորապես շարականները՝ լավ պահպանված:

Այս գլխում հեղինակին հաջողվում է. ա) Գտնել խազերով ձայնագրված երգը կառուցվածքի տեսակետից բաղկացուցիչ մասերի բաժանելու օրինաչափությունը և հայտնաբերել երգերը վերջավորող հատուկ նշանները (կա-

դանսավորող խազերը)։ ր) Սահմանել, որ որպես կանոն անողություն հատուկ նշաններ խազերում չկան, որ ինտոնացիայի ամեն մի նշան, կամ նշանների մի մասը միաժամանակ ցույց են տալիս հնչյունի կամ երաժշտական դարձվածքի տեղությունը։ Տեղական արժեքների սահմանումը հնարավորություն է ստեղծում գաղափար կազմելու մեղեդիի մետրի ու ռիթմական կմախքի մասին։ դ) Պարզել, որ խազերի ֆակտուրան որոշակի հասկացողություն է տալիս երգի ընդհանուր բնույթի մասին, ընդ որում նշանախմբերի մեծությունն ու առատությունը ցույց են տվել երգի մեղեդիապես զարգացած լինելը և ընդհակառակը։ դ) Որոշել, որ խաղախմբերը միացնում են իրենց մեջ ընդգրկված առանձին նշանների նշանակությունները։ ե) Կազմել X—XII դարերի խազային սիստեմի նշանների ճշտված տախտակը և որոշ շափով այն սիստեմավորել։ զ) Տալ 10 խաղանշանների նշանակությունները, ընդ որում որոշ դեպքերում չլիքական մանրամասն ձևով։ Հեղինակին հաջողվում է սահմանել, որ որոշ խազեր ցույց են տալիս միայն մեղեդիի վերլուծաց կամ վարընթաց շարժումը (շեշտ և խունճ), ուրիշները՝ մեղեդիական դարձվածք (պարույկ կամ ոլորակ, խոսքովային), իսկ նրանց մի մասն ունի միայն ռիթմական նշանակություն (երկար և սուղ)։

Հեղինակն այս գլխի վերջում կանգ է առնում նաև X—XII դարերի խազային սիստեմի ընդհանուր բնորոշման վրա, որովհետև խազային նոտագրության վերականգնման հարցը ընդհանուր սիստեմի սկզբունքի վերականգնման մեջ է։ Այստեղ ևս հեղինակին հաջողվում է անել հիմնավոր եզրակացություններ մետրի, ռիթմի ու շափի նշանակումների մասին, լադերի և ինտոնացիաների փոխադարձ կապերի ու լադային մոդուլյացիաների մասին։

Գարեհրէ Լ, որ սիստեմի ընդհանուր բնորոշման կապակցությամբ, մեկ անգամ ևս ընդգրծվում է հայկական ու հունական խաղային նոտագրության սիստեմների կական տարբերություններից մեկը. «Քյուզանդական նոտագրության մեջ ինտոնացիան գրի առնելու համար մեղեդին բաժանվում է առանձին ինտերվալներին, իսկ խազերի սիստեմում նույն նպատակով մեղեդին հիմնականում բաժանվում է առանձին երաժշտական դարձվածքների» (էջ 269), որոնք կապված են որևէ կոնկրետ լադի հետ։

Աշխատության մեջ կան մի քանի թերություններ։ Այսպես, օրինակ, Ա ձայնին վերագրված է դիմող ձայն, երբ հայտնի է, որ նա դիմող ձայն չունի (տե՛ս հայ երաժշտության տեսության գասագրերը, պրոֆ. Բ. Ս. Քուշնարյանի «Հայ մոնոդիկ երաժշտության պատ-

մության և տեսության հարցերը» և այլ աշխատություններ)։

Մտքի անճշտություն կա ինտոնացիոն խազերին տեղական արժեք վերագրելու հարցում։ 201-րդ էջում հեղինակը տեղական արժեք է վերագրում ինտոնացիոն նշաններին կամ նրանց մի մասին, իսկ 264-րդ էջում՝ բոլոր ինտոնացիոն նշաններին։

Միևնույն երևույթի նկատմամբ օգտագործված են տարբեր տերմիններ՝ «ինտոնացիոն նշանակություն» (258), «ինտոնացիոն կողմ» (261), «ինտոնացիոն արժեք» (253)։ Արժեք է վերագրվում և առանձին խազի՝ «խոսքովայինի վերը բերված արժեքները...» (256) և այլն։ Այս հանգամանքը դժվարացնում է նյութի ընկալումը։

75-րդ էջում բաղաձայնություն տերմինը օգտագործված է բազմաթիվ ձայն-լադերի իմաստով։ Դա միանգամայն աննպատակահարմար ենք գտնում, որովհետև երաժշտության մեջ բաղաձայնություն տերմինը այլ հասկացողության հետ է կապված և տվյալ դեպքում մտքի շփոթության տեղիք է տալիս։ Պետք է բազմաձայնության փոխարեն օգտագործել բազմազանություն բառը։

Լավ տպագրված գրքի մեջ կան վրդպակներ (վերջում վրդպակների տախտակով չեն ցույց տրված), որոնցից մի մասը, սակայն, բացասաբար է ազդում արտահայտած մտքի ճշտության վրա։ Այսպես, 22-րդ էջի 20-րդ տողում տպված է «խազեր ունի», պետք է լինի՝ «խաղեր չունի», 263-րդ էջի 10-րդ տողում տպված է «դրություն», պետք է լինի՝ «գրություն», իսկ 277-րդ էջում տեքստի 3-րդ և 16-րդ տողերը փոխադարձաբար տեղերը փոխել են, որի պատճառով տեքստը բոլորովին չի հասկացվում։ Կան վրդպակներ նոտային օրինակներում (էջ 33, 265 և այլն)։

Մոտ կես դար է անցել այն օրից, երբ դադարեց մեծ Կոմիտասի՝ խազերի գաղտնիքն իմացող միակ մարդու գիտակցական գործունեությունը։ Հասկանալի է, որ հրապարակելով ամեն մի նոր աշխատություն չի կարող հավակնություն ունենալ լիովին լուծելու խազերի բարդ պրոբլեմը։ Քննարկվող աշխատության մեջ հեղինակը ևս նշում է, որ շատ բան դեռևս անհայտ է. շմոռանանք, որ աշխատության մեջ շատ բան էլ առաջ է քաշվում իբրև

<sup>1</sup> Ինչպես հայտնի է. Կոմիտասը 1910 թ. գրել է. «Երաժիշտ, ևս գտել եմ հայ խաղերի բանալին և նույնիսկ կարող եմ պարզ գրել վածքները. բայց դեռ վերջնականին չեմ հասել» (Կոմիտաս, Հոգիածներ և ուսումնասիրություններ, Հայպետհրատ, Երևան, 1941, էջ 188)։

գիտական ենթադրություն: հազերի պրորբների վերջնական լուծումը անշուշտ կպահանջի հետագա քրտնաջան հետազոտություններ: Սակայն Աթալանի ուսումնասիրությանը ուշադիր ծանո-

թանալը թույլ է տալիս մտածելու, որ հեղինակը իրոք գտել է դեպի խազերի ընթերցումը տանող ճանապարհի հետքերը:

Մ. ԲՐՈՒՏՅԱՆ

# ياقوت الرومى معجم البلدان مجلد ٥ - ١ دار صادر بيروت ١٩٥٧-١٩٥٥

ՅԱԿՈՒՏ ԷԼ-ՌՈՒՄԻ, Աշխարհագրական բառարան, հատորներ 1—5, Սադեր հրատարակչություն, Բեյրութ, 1955—1957:

1955—1957 թթ. Բեյրութում Սադեր հրատարակչությունը հինգ սովոր հատորներով լույս է բնծայել միջնադարյան արաբ աշխարհագիր Յակուտ էլ-Ռումիի Աշխարհագրական բառարանը (Մոզամ ալ-Քուլլան), որն իրավացիորեն համարվում է արաբական հարուստ գրականության ուշագրավ գործերից մեկը<sup>1</sup>:

Մոտ հարյուր տարվա ժամանակամիջոցում այդ բառարանն արժանացել է երեք տպագրություն (առաջին անգամ 1866—1870 թթ. Լայպցիգում, երկրորդ անգամ՝ 1906 թ. Կահիրեում) և միշտ էլ մնացել է Կովկասի ու Անդրկովկասի ժողովուրդների պատմությունը հետազոտող գիտնականների ուշադրության կենտրոնում: Պատմական այդ մեծարժեք աշխատությունից օգտվելով՝ արևելագետ Ֆրենկ պատրաստել է մի շարք գործեր հին առանների, բաշկիրների, խազարների և Վոլգայի բուլղարների

մասին: Մի ուրիշ արևելագետ՝ Ֆ. Բ. Շարման նույնպես օգտագործել է այն՝ հին սլավոնների մասին իր հանրահայտ աշխատությունը շարադրելու համար:

Աշխարհագրական բառարանը յուրաքանչյուր տեղանվան հետ կապված բազմակողմանի տեղեկությունների մի շտեմարան է, որը լույս է սփռում միջին դարերի աշխարհագրական, պատմական, ազգագրական մշտնապատ շատ հարցերի վրա: Նա տալիս է յուրաքանչյուր տեղանվան ստուգաբանությունը, ճշգրիտ հունչունական կոդը, նկարագրում է յուրաքանչյուր երկրի կամ քաղաքի աշխարհագրական դիրքը, սահմանները, բնությունը, բերքերը և այլն, ճշտում է, թե ղլխավոր քաղաքների միջև ինչ տարածություններ կային և որքան ժամանակ էր հարկավոր մի տեղից մյուսը ղնալու համար: Այնուհետև նա պատմում է, թե այդ վայրերը ե՞րբ և ո՞ւմ ձևերից են վերցրել արաբները, գրանցում ապրող ժողովուրդներն ի՞նչ կապեր են ունեցել և ունեն հարևան ժողովուրդների հետ, ի՞նչ արտադրությամբ են հայտնի և ի՞նչ ակնառու գեմքեր են տվել իսլամական կուլտուրային:

Աշխարհագրական բառարանում Յակուտ էլ-Ռումին օգտագործել է բազմաթիվ աղբյուրներ: Կարևոր են I—X դարերում արաբ աշխարհագիրների գեպի Կովկաս կատարած ճանապարհորդությունների նկարագրությունները: Այդ կարգի գործերից ընդարձակ քաղվածքներ կատարելով, Յակուտ էլ-Ռումին փրկել է կորստից մի շարք մեծարժեք վավերագրեր, որոնք

<sup>1</sup> Յակուտ էլ-Ռումին ձևվել է Բուլղանգիայում (Բելուդ էր-Ռում), 1173 թ.: Մանուկ հասակում իր հայրենի երկրից գերի տարվելով, Միջագետքում վաճառվել է մի քաղցրագլխի վաճառականի: Տիրոջ մահից հետո նա սկսել է զբաղվել գրքի առևտրով: 1216 թ. Մերփում նա ձեռնարկել է Աշխարհագրական բառարանը կազմելուն: 1218—1219 թթ. Մերփի հարուստ զբաղարաններում նյութեր հավաքելուց հետո անցել է Պորեյմ՝ նույն աշխատանքը շարունակելու համար: Նույն նպատակով նա օյցելել է Մոսուլ (1220—1222), Հալեպ (1222—1224), Կահիրե (1224—1228): 1229 թ., երբ արդեն լրիվ ավարտել էր Աշխարհագրական բառարանը, Յակուտ էլ-Ռումին վախճանվել է Հալեպում:

<sup>2</sup> Յակուտի բառարանի այն մասերը, որոնք կապված են հայ ժողովրդի և նրա հարևան ժողովուրդների պատմության հետ, առաջին անգամ ամբողջությամբ թարգմանել է հանգույցյալ պատմության Հ. Եսլյանդյանը: Այդ թարգմանությունը գեղատեսիլ է ձևավորվել փրճակում:

<sup>1</sup> Ահա մի երկու նմուշ. խազարների իթիլ քաղաքից Բար էլ-Արվար 12 օրվա ճանապարհ էր, Բար էլ-Արվարից Մամանդար՝ 4 օրվա, Մամանդարից Մերիբի երկիրը՝ 2 փարսախ, Մարավայից Արզարիլ՝ 2 օրվա, Արզարիլից Թավրիզ՝ 7 օրվա, Թավրիզից Մարանդ՝ 2 օրվա, Ուրմիայից Մալմաստ՝ 2 օրվա, Մալմաստից Թավրիզ՝ 3 օրվա, Սիսականից Դփին՝ 16 փարսախ և այլն: